

**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ  
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ 2020Թ.  
ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ) ՓՈԻԼ  
9 - ԲԴ ԴԱՄԱՐԱՆ**

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեստային և գրավոր առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

**1. Ի՞նչ խնդիրներ է ունեցել բանակալը հին դարերում:**

- ա. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, գրավել նոր տարածքներ,
- բ. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, կատարել դաշնագրային պարտավորությունները,
- գ. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, մասնակցել զորավարժություններին,
- դ. հակահարված տալ թշնամուն, մասնակցել ամրաշինական շինությունների կառուցմանը, մասնակցել զորավարժություններին

<b>v</b>

**2. Ե՞րբ և որտեղ են ստեղծվել սղնախները:**

- ա. Սյունիքում 17-րդ դար
- գ. Արցախում 18-րդ դար
- բ. Խամսայում 18-րդ դար.
- դ. Արցախում և Սյունիքում 17-18-րդ դարեր

<b>v</b>

**3. 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ ո՞վ էր Հայկական զորքերի սպարապետը**

- ա. Զրիստափոր Արարատյանը
- գ. Պողոս Բեկ-Փիրումյանները
- բ. Արամ Մանուկյանը
- դ. Թովմաս Նազարբեկյանը

<b>v</b>

**4. Ի՞նչ է կողմնացույցը:**

- ա) Կողմնացույցը պարզագույն սարք է, որով որոշում են Հյուսիսը, Հարավը, Արևելքն ու Արևմուտքը:
- բ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ հորիզոնի կողմերը կամ կոմսորոշիչի ուղղությունը որոշելու համար:
- գ) Կողմնացույցը բարդ սարքավորում է՝ հորիզոնի կողմերը կամ կողմնորոշիչների ուղղությունը որոշելու համար
- դ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ առարկաների դիրքերը և հեռավորությունները որոշելու համար:

<b>v</b>

**5. Կախված մարտում նպատակին հասնելու եղանակից և մարտնչող կողմերի զորքերի գործողության բնույթից՝ մարտը լինում է.**

- ա. հարձակում և պաշտպանություն
- գ. պաշտպանություն և ճակատամարտ
- բ. ճակատամարտ և հանդիպական մարտ
- դ. հարձակում և մերձամարտ

<b>v</b>


**6. Թվարկվածներից ո՞րն է համրվում միջազգային մարդասիրական իրավունքի էությունը.**

- ա. Կանոնակարգում է զինված ընդհարումները՝ նպատակ ունենալով թեթևացնել մարդկային տառապանքները, մեղմել պատերազմի պատճառած ցավալի հետևանքները:
- բ. Կանոնակարգում է զինված հարձակումները՝ նպատակ ունենալով ապահովել մարդկային կյանքերի անվտանգությունը:
- գ. Պաշտպանում է հարձակվողի իրավունքներն ու շահերը:
- դ. Պաշտպանում է հարձակման ենթարկվածի իրավունքներն ու շահերը:

v

**7. Հայաստանի Առաջին Հանրապետության (1918թ.) զինվորական նախարարներն էին**

- ա. Հովհաննես Հախվերդյան, Քրիստափոր Արարատյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Դրաստամատ Կանայան (Դրո)
- բ. Արամ Մանուկյան, զեներալ-մայոր Մովսես Սիլիկյան, Դանիել Բեկ-Փիրումյան, Քրիստափոր Արարատյան
- գ. Պողոս Բեկ-Փիրումյան, Գարեգին Նժդեհ, Դրաստամատ Կանայան (Դրո), Հովհաննես Հախվերդյան
- դ. Արամ Մանուկյան, Թովմաս Նազարբեկյան, Քրիստափոր Արարատյան, Գուրգեն Տեր-Մովսիսյան

v

**8. Ներսեհապատի ճակատամարտը տեղի է ունեցել**

- ա. 451թ.
- բ. 482 թ.
- գ. 481 թ.
- դ. 301թ.

v


**9. Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական կողմի պաշտպանության ղեկավարն էր**

- ա) Դրաստամատ Կանայանը
- բ) Դանիել Բեկ Փիրումյանը
- գ) Ալեքսանդր Բեյ Մամիկոնյանը
- դ) Պողոս Բեկ Փիրումյանը

v

**10. Պայթյունը՝**

- ա) մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում կարճատև ժամանակահատվածում.
- բ) միջին քանակությամբ էներգիայի անջատումն է փոքր տարածությունում կարճ ժամանակահատվածում.
- գ) մեծ քանակությամբ էներգիայի տեղափոխումն է փոքր տարածությունից դեպի մեծ տարածություն.
- դ) միջին քանակությամբ էներգիայի տեղափոխումն է փոքր տարածությունից դեպի մեծ տարածություն.

v

**11. Ո՞րն է մագնիսական ազիմուտը:**

Մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետն ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության) կոչվում է մագնիսական ազիմուտ:

**12. Երկու մասշտաբներից մեծ է այն մասշտաբը, որի (Գրել նաև օրնակները).....**

հայտարարն ավելի փոքր է, օրինակ 1:50 000 մասշտաբն ավելի մեծ է, քան 1:100 000: Առաջինի դեպքում քարտեզի վրա 1 սմ-ին համապատասխանում է 500 մ, իսկ երկրորդի դեպքում՝ 1 կմ-ն:

**13. Հրդեհը** այրման անվերահսկելի գործընթաց է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքին և առողջությանը: Հրդեհի ծագման համար, սովորաբար, տեղանքում պետք է լինեն՝ այրվող նյութ, օքսիդիչ(թթվածին) և բոցավման աղբյուր (կայծ, բոց):

**14. Մասշտաբը** թվային արտահայտություն է (պայմանական չափի), որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված տարածքը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

**15. Սուր ճառագայթահարումը՝** մարդկանց մեկանգամյա ճառագայթահարումն է 100 Ռենտգեն բաժնեչափով:

**16. Ուշագնացության նախանշաններն են՝** թեթև գլխապտույտը, սրտխառնոցը, դեմքի գունատությունը, շարժումների կոորդինացիայի խանգարումները, տեսողության խանգարումները (մթազնում, սև-սպիտակ լուսապսակներ, առկայծող բծեր և այլն), բնորոշ զնգոցը, խշշոցն ականջներում և այլն:

**17. Թմբիրը (կոլապս)** սուր անոթային անբավարարություն է, որն առաջանում է զարկերակային ու երակային ճնշումների անկման, շրջանառվող արյան քանակի նվազման պատճառով:

**18. Հրաձգության ժամանակ պահպանվում են անվտանգության հետևյալ կանոնները.**

Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ լիցքավորված չէ՞, արդյոք զենքը:  
Պահեստատուփը լիցքավորելիս ուշադիր հետևել՝ ուսումնական փամփուշտների մեջ չկա՞ն, արդյոք, մարտական փամփուշտներ:  
Կտրականապես արգելվում է զենքը ուղղել մարդկանց վրա, անկախ այն բանից լիցքավորված է այն, թե՛ ոչ

**19. Թվել օրգանիզմի մահանալու (սահմանային/տերմինալ) փուլերը՝** Նախահոգեվարք, հոգեվարք, կլինիկական մահ:

**20. Ինքնաձիգի փողը նախատեսված է** գնդակի թռիչքին ուղղություն տալու համար: